| | |
|---|---|
| ՊԱՇՏՈՆ | IFRS հաշվետվությունների պատասխանատու |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | Լրիվ դրույք |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ք. Երևան, ՀՀ |
| ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ | Հնարավորինս շուտ |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | 07/02/2025թ. |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ | Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով |

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածու, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում (ամսական, եռամսյակային, տարեկան)
- Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների պատրաստում (կիսամյակային, տարեկան)
- IFRS հաշվետվությունների պատրաստում (ամսական, եռամսյակային, տարեկան)
- Ֆինանսական հաշվետվությունների համախմբում
- Արտաքին աուդիտի պրոցեսի աջակցում
- Ղեկավար կազմին ներկայացվող հաշվետվությունների փաթեթի մաս կազմող ֆինանսական հաշվետվությունների պատրաստում
- Հաստիքից բխող այլ պարտականությունների իրականացում

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ, կամ որպես աուդիտոր
- IFRS իմացություն
- Ֆինանսական հաշվետվությունների համապատասխանեցում IRFS ստանդարտներին
- ACCA որակավորման առկայությունը/ կամ որակավորման փուլում գտնվելը կդիտվի որպես առավելություն
- «Մեծ քառյակում» ("Bing Four") աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն
- ՀՀ բանկային օրենսդրության լավ իմացություն

- MS Office ծրագրային փաթեթի գերազանց իմացություն, մեծ բազաների հետ աշխատելու կարողություն
- LS ծրագրի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Ժամանակի արդյունավետ կառավարում
- Վերլուծական հմտություններ
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ, միաժամանակ մի քանի առաջադրանքներ կատարելու հմտություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/103: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/ :